ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՄՈՒԼՍԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔԱՂՑՐԱՀԱՄ, ՀԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ամուլսարի հանքավայրը տեղադրված է Սևանի ջրահավաք ավազանի սահմաններում, ուստի բացառված չեն հանքավայրի շահագործման ընթացքում Սևանա լճի վրա ուղղակի և անուղղակի ազդեցությունները: Այս առումով Սևանա լճի վրա ազդեցության ռիսկերը պատշաճ գնահատված չեն:

«Լիդիան Արմենիա» ՓԲ Ընկերության կողմից շրջանառության մեջ է դրվել այսպես կոչված «Ամուլսարի տեկտոնական բլոկ» հասկացությունը, դրանով փորձ է արվում ցույց տալ, որ Ամուլսարը առանձին՝ մեկուսի երկրաբանական-հիդրոերկրաբանական առանձնահատկություններով օժտված կառույց է, սակայն «Հայաստանի երկրաբանական ֆոնդեր» ՊՈԱԿ-ի արխիվներում առկա երկրաբանական քարտեզների և «Լիդիան Արմենիա» ՓԲ Ընկերության գծագրական հավելվածներում տեղադրված երկրաձևաբանական սխեմաների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Ամուլսարի տեկտոնական բլոկ» կոչված կառույցի առանձնացումը հիմնավոր չէ, քանի որ խզվածքային կառույցների մի մասը ենթադրվող են (տես. նկ. http://www.geoteam.am/amulsar-project/about-the-mine.html):



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ երկրաբանական և երկրաձևաբանական քարտեզների ու սխեմաների ոչ ճիշտ մեկնաբանումը թույլ չի տալիս լիարժեք գնահատել բոլոր այն բնապահպանական ռիսկերը, որոնք հանքավայրի շահագործման ընթացքում ի հայտ կգան տարածաշրջանի խմելու և հանքային, այդ թվում նաև Սևանի ջրերի վրա:

Սևանա լճի վրա ազդեցության ռիսկերը պատշաճ գնահատված չեն: